# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2020թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2020/01**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Տ. Լաճիկյանի (լիազորագիր, տրված՝ 24.01.2020թ.)

Ա. Մխիթարյանի (լիազորագիր, տրված՝ 24.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2019թ. թիվ 26/26-1/21741-2019 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ սոցիալական ապահովության ծառայության 26.12.2019թ. թիվ 02/12-1/30391-2019 գրության հիման վրա, 27.12.2019թ. թիվ 26/26-1/21741-2019 գրությամբ նախաձեռնել է «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Պատվիրատու հանդիսացող ՀՀ սոցիալական ապահովության ծառայության գործողություններն իրավաչափ չեն, խտրական են և չկան բավարար հիմնավորումներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ներքոնշյալ պատճառաբանությամբ.

1. «Այթիռեսուրսիս» ՍՊ ընկերությունը 2019 թվականի հուլիսի 31-ին Սոցիալական ապահովության ծառայության (հետայսու նաև՝ Պատվիրատու) հետ կնքել է ծրագրային ապահովման ծառայությունների մատուցման թիվ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/18» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն որի ծառայությունների մատուցումը պետք է իրականացվեր մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը: Ընկերությունը դեռևս 2019 թվականի դեկտեմբերի 11-ին ծառայությունների արդյունքը հանձնել է ծառայությանը: Ծառայության արդյունքը հանձնելուց 8 օր հետո Պատվիրատուի գլխավոր քարտուղարի գրությամբ մեզ է ուղղորդվել ծառայության աշխատանքային խմբի ղեկավարի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 18-ին կազմված տեղեկանքը, որում նշված էին Պատվիրատուի դիտողությունները և համաձայն որի Ընկերությանը տրամադրվել է ընդամենը 1 աշխատանքային օր՝ ներկայացված շտկումներն իրականացնելու համար: Վերը նշված տեղեկանքում առկա որոշ դիտողություններ, որոնք շտկվել են և առկա էին դիտողություններ, որոնք առհասարակ չէին բխում պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներից, մասնավորապես՝ վերը նշված տեղեկանքի «Շտեմարանի ուսումնասիրման ընթացքում արձանագրված դիտողություններն ու պարզաբանումները» բաժնի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված էր, որ ԱԻՆ, ԴԱՀԿ, Ոստիկանություն ՔԿՀ կառույցների համապատասխան աղյուսակում որոշ ամիսներում բացակայում է վճարման փաստի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը չի կարող լինել հավաստի: Ակնհայտ է, որ

Ընկերությունը չի կարող պատասխանատվություն կրել վերը նշված կառույցների կողմից տրամադրված տեղեկատվության հավաստիության համար: Ընկերությունը պարզապես համապատասխան կառույցների կողմից տրամադրված տեղեկատվությունը ներառել է Ընկերության կողմից մշակված ծարգարային ապահովման մեջ: Տեղեկանքի վերաբերյալ Ընկերությունը հայտնել է իր դիրքորոշումը 2019 թվականի դեկտեմբերի 23-ին՝ դրան կցելով ծրագրի լրամշակված տարբերակը:

2. 2019 թվականի դեկտեմբերի 25-ին «armeps» համակարգի միջոցով Պատվիրատուն մերժել է Ընկերության կողմից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունը՝ կցելով բացասական եզրակացություն, որը կազմվել է ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 2017 թվականի մայիսի 20-ի թիվ 228-Ն հրամանի հալեվածի 5-րդ կետի պահանջների խախտմամբ, որը սահմանում է, որ մատուցված ծառայությունները՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին, քանակական ցուցանիշներին և գնման ժամանակացույցին չհամապատասխանելու դեպքում «Նշումներ անհամապատասխանություններ մասին» բաժնում մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վկայում է այն մասին, որ Պատվիրատուն տվյալ պահին որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերել, ուստի, վերը նշված եզրակացությունը չի կարող իրավական հիմք հանդիսանալ Ընկերության կողմից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության մերժման համար:

3. 2019 թվականի դեկտեմբերի 30-ին Պատվիրատուի կողմից էլ. փոստի միջոցով ուղղորդվել է նամակ, որում նշված է, որ Ընկերությանն է տրամադրվում բացասական եզրակացության հիմնավորող տեղեկանքը, որը ևս Ընկերությունը գտնում է, որ իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

1) 2019 թվականի դեկտեմբերի 30-ին կազմված տեղեկանքը չի կարող հիմք հանդիսանալ 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կազմված բացասական եզրակացության համար.

2) Տվյալ տեղեկանքում ներառված են այնպիսի դիտողություններ, որոնք ներառված չեն եղել Ընկերությանը 2019 թվականի դեկտեմբերի 19-ին տրամադրված տեղեկանքում, այնինչ ծառայության կողմից հայտնաբերված անխտիր բոլոր անհամապատասխանությունները պետք է ներկայացվեին միառժամանակ, որպեսզի Ընկերությունը

հնարավորություն ունենար շտկելու դրանք, այլ ոչ թե որևէ անհամապատասխանություն հայտնաբերվելուց և Ընկերության կողմից շտկվելուց հետո հայտնաբերել հաջորդը.

3) Տվյալ տեղեկանքը կազմվել է դեռևս 2019 թվականի դեկտեմբերի 11-ին Ընկերության կողմից ներկայացված ծրագրից, ինչի մասին վկայում են ներկայացված նկարները, քանի որ 2019 թվականի դեկտեմբերի 23-ին ներկայացված շտկված ծրագրի ինտերֆեյսի գույները ոչ թե մանուշակագույն են, այլ սև, ինչը վկայում է այն մասին, որ ծառայության աշխատակիցները չեն ստուգել 2019 թվականի դեկտեմբերի 23-ին Ընկերության կողմից լրամշակված ծրագիրը.

Տեղեկանքում նշված է, որ Պատվիրատուի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 15-ին աշխատանքների իրականացման ծրագիրը և նկարագրությունը ստանալու նպատակով ուղղորդված թիվ 02/16-1/24433-2019 գրությունը մնացել է անպատասխան, ինչը ևս չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերությունը վերոգրյալ գրությանը պատասխանել է 2019 թվականի հոկտեմբերի 22-ին էլ.փոստի միջոցով՝ կցելով աշխատանքների կատարման ծրագիրը և աշխատանքների իրականացման փուլերը:

Պայմանագրի կատարման ընթացում Ընկերության կողմից բազմիցս ներկայացվել են ծրագրային ապահովման թեստային տարբերակները, որոնց վերաբերյալ Պատվիրատուն ներկայացրել է իր դիտողությունները, սակայն դրանցում բացակայում են այն դիտարկումները, որոնք ներկայացվել են տեղեկանքում, չնայած այն բանի, որ տեղեկանքում վկայակոչված դիտարկումները Պատվիրատուն հնարավորություն ուներ և պետք է ներկայացներ թեստային տարբերակները դիտարկելիս:

Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ Ընկերությունը պատշաճ կարգով մատուցել է Պայմանագրով ստանձնած ծառայությունները, իսկ Պատվիրատուի գործողություններն իրավաչափ չեն: Ուստի, Ընկերությունը խնդրել է մերժել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/01 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 10:00-ին և 29.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 29.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր

ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ սոցիալական ապահովության ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.12.2019թ. թիվ 02/12-1/30391-2019 գրությամբ հայտնել է, որ Սոցիալական ապահովության ծառայության և «Այթիռեսուրսիս» ՍՊ ընկերության միջև 2019 թվականի հուլիսի 31-ին կնքվել է «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման» N ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/18 գնման պայմանագիր, որով Կատարողը ստանձնել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 1.1-ին, 1.2-րդ կետերի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում մատուցել նույն հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություններ:

Սակայն Կատարողի կողմից Պայմանագրի N 3.1 հավելվածով Պատվիրատուին հանձնված Պայմանագրի արդյունքը չի համապատասխանում Պայմանգրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը՝ ընդ որում Պայմանագրի նույն կետի «ա» ենթակետի համաձայն պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 7.9-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը ապահովել է միակողմանի լուծված Պայմանագրի ծանուցումը և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, համապատասխան բանկ ներկայացնելու և տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու ուղղությամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/01 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 10:00-ին և 29.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը:

## 4. <u>ՍՑ-ՆԳ-2020/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ սոցիալական ապահովության ծառայության և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 31.07.2019թ. կնքվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը ստանձնել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին ուղղված 26.12.2019թ. թիվ 02/12-1/30343-19 գրությամբ (www.gnumner.am կայքում հրապարակվել է 27.12.2019թ.) ՀՀ սոցիալական ապահովության ծառայությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2019թ. թիվ 26/26-1/21741-2019 գրությունը, ՀՀ սոցիալական ապահովության ծառայության 26.12.2019թ. թիվ 02/12-1/30391-2019 գրությունը և կից փաստաթղթերը, «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ սոցիալական ապահովության ծառայության և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 31.07.2019թ. կնքվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը ստանձնել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2019թ.:

Ընկերության կողմից 11.12.2019թ. Պատվիրատուին ներկայացվել է Պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N 1 արձանագրությունը, Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N 1 Ակտը, 11.12.2019թ. դուրս գրված թիվ Ա7583428767 հարկային հաշիվը:

Ընկերությանն ուղղված 19.12.2019թ. թիվ 02/16-1/29620-19 գրությամբ Պատվիրատուն «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին տրամադրել է Պայմանագրի շրջանակներում կատարված

աշխատանքների վերաբերյալ ՍԱԾ աշխատանքային խմբի ղեկավարի կողմից 2019թ. դեկտեմբերի 18-ին հաստատված տեղեկանքը:

Նշված տեղեկանքի համաձայն Ընկերության կողմից ներկայացված աշխատանքները կատարված են ոչ լիարժեք և չեն ապահովում Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջները:

Նույն տեղեկանքով արձանագրվել են անհամապատասխանությունները:

Նույն տեղեկանքով ամրագրվել է, որ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին անհրաժեշտ է մինչև 23.12.2019թ. տալ հնարավորություն դիտողություններին ծանոթանալու և շտկված ծրագրային ապահովումը կամ համապատասխան մեկնաբանությունները Պատվիրատուին տրամադրելու համար:

ՀՀ սոցիալական ապահովության ծառայությանն ուղղված 23.12.2019թ. գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն ներկայացրել է ՍԱԾ աշխատանքային խմբի ղեկավարի կողմից 2019թ. դեկտեմբերի 18-ին հաստատված տեղեկանքում արձանագրված անհամապատասխանությունների շտկումները և մեկնաբանությունները:

Նույն գրությամբ Ընկերությունը գտել է, որ վերջինիս կողմից պատշաճ կարգով են իրականացվել ստանձնված պարտավորությունները և Ընկերությունը խնդրել է ընդունել ներկայացված աշխատանքները:

Համաձայն Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 25.12.2019թ. N 1 բացասական եզրակացության՝ Ընկերության կողմից Պայմանագրի 3.1 հավելվածով Պատվիրատուին հանձնված պայմանագրի արդյունքը չի համապատասխանում Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին ուղղված 26.12.2019թ. թիվ 02/12-1/30343-19 գրությամբ (www.gnumner.am կայքում հրապարակվել է 27.12.2019թ.) ՀՀ սոցիալական ապահովության ծառայությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,.

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն 31.07.2019թ. «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով պայմանագրով ստանձնել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը: Նշված Ծառայության կատարման ժամկետը սահմանվել է մինչև 15.12.2019թ.:

Պայմանագրի 2.2 կետի 2.2.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.2 ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն, չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման **<u>ողջամիտ ժամկետ</u>** և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

Ընկերությանն ուղղված 19.12.2019թ. թիվ 02/16-1/29620-19 գրությամբ Պատվիրատուն «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին տրամադրել է Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ ՍԱԾ աշխատանքային խմբի ղեկավարի կողմից 2019թ. դեկտեմբերի 18-ին հաստատված տեղեկանքը, որով հանձնված Ծառայության մեջ արձանագրվել են անհամապատասխանությունները: Միևնույն ժամանակ Պատվիրատուի

կողմից Ընկերությանը տրամադրվել է **ընդամենը 1 աշխատանքային օր ժամկետ** թերությունները շտկելու և Ծառայությունը կրկին հանձնելու համար:

Դրա հետ մեկտեղ, Ընկերության կողմից 23.12.2019թ. Պատվիրատուին ուղարկվել է գրություն, որում Ընկերությունը նշել է, որ Տեղեկանքով արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են և Ընկերությունը գտնում է, որ մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի տեխնիկական բնութագրին:

Պատվիրատուի կողմից 25.12.2019թ. տրվել է բացասական եզրակացություն Ընկերության կողմից հանձնված Ծառայության վերաբերյալ և որպես անհամապատասխանություն նշվել է, որ Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ. «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 228-Ն հրամանի հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը լրացվում է հետևյալ կերպ. կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները և մատակարարված ապրանքները՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին, քանակական ցուցանիշներին և գնման ժամանակացույցին համապատասխանելու դեպքում «Նշումներ անհամապատասխանությունների մասին» բաժնում լրացվում են միայն հետևյալ բառերը՝ «անհամապատասխանությունները բացակայում են», **հակառակ դեպքում՝ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները:**

Տվյալ դեպքում Ընկերությանը տրամադրվել է ընդամենը մեկ աշխատանքային օր ժամկետ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար, որոնք ըստ Ընկերության դիրքորոշման, շտկվել են: Միևնույն ժամանակ՝ Ընկերության կողմից կրկին ներկայացված Ծառայության վերաբերյալ Պատվիրատուի կողմից տրվել է բացասական եզրակացություն, որի մեջ, սակայն ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ. N 228-Ն հրամանի համաձայն, մանրամասն չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նման պայմաններում, Պատվիրատուի կողմից կազմված բացասական եզրակացության մեջ Ընկերության կողմից շտկված Ծառայության վերաբերյալ կրկին արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրության բացակայության պայմաններում, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ բավարար հիմքեր առկա չեն Ընկերության կողմից Պայմանագրի էական խախտման փաստը գնահատելու և արձանագրելու, հետևաբար նաև Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ուստի Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2019թ. թիվ 26/26-1/21741-2019 գրությամբ «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**